



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Բ. — ՇՐՋԱՆ ԺԸ.

1885

ՏԱՐԻ ԺԷ. ՓԵՏՐՎԱՐ 28.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԽՂՃՄՏԱՆՔԻ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ.

Ինչպէս որ մարդու ստուերն իւր ետեւից գնումէ անբաժան,
այսպէս և չար գործն ամեն մի յանցաւորի սրտից ամենեւին չէ
հեռանում: Հանգիստ ու դադար չէ տալի: Յանցաւոր մարդն,
որոյ սիրտն որդնի պէս կրծումէ իւր արած մեղքն, ուր ուզի, թող
փախչի, ամենահեռաւոր անապատ՝ անմարդաբնակ տեղը թող
գնայ, ուր որ ոչ մի ձայն, ոչ մի խօսք չէ լսում, ուր որ յաւի-
տենական մի լռութիւն է թագաւորում, իւր յանցանքի դառն
յիշատակը՝ հազար և մի յանդիմանութիւն կ'թափի նորա գլխին,
հազար ու մի իրաւացի մեղադրանքներով նորա սիրտը կ'իրաւորի
ու կ'սեւացնի: Յանցանքի տէր մարդն՝ ուզենայ՝ սարեր ձգի իւր
արածների վերայ, որ ծածկի, թաղի, բայց ինչպէս որ հրաբուխ
սարի բերաններից քանի քանի անգամ էլի կրկնումէ կրակ դուրս
գալն, այսպէս ևս նորա սիրտն՝ իւր արածների կրակովն միշտ
պիտի այրուի միշտ մուխը գլխիցը պիտի դուրս գայ: Ուզենայ
ծովի անդունդքի մէջը ձգի իւր արածն, որ տակը գնայ, թաղուի,
էլ դուրս գալու հնարը չլինի, բայց մի ալիք էլի երես կ'հանի ու

625

ափր կրերի՝ իւր վատ գործը: Մինչև անգամ երկրիս ամենազօրեղ իշխանութիւնն, որ մարդուս մահն է, մահն անգամ չէ կարող սրբել, ջնջել այն, ինչ որ իբրև գործ կատարուել է: Գերեզմանն էլ, որ ամէն մի ցաւ բժշկումէ, գերեզմանն էլ չէ կարող բնաւ յետ բերել կորցրած անմեղութիւնն: Գերեզմանների մէջ պառկածների վերայ ևս յաւիտենական դատաւորը կայ, արդարադանն Աստուած: Բայց իմ սրտիս համար այս է մնում մխիթարութիւն, որ դատողս Աստուած է, Որոյ անսահման սէրն ամենածանր յանցանքի տանջանքից ու հալածանքից, մարդուս աչքերը սեւացնող մահուան սպանիչ հարուածից անհամեմատ կերպով զօրաւոր է, իմ երկնաւոր Հօրս այս յաւիտենական սէրն, որ թագաւորումէ երկրիս խաւարի ու երկնի լուսաւոր աստղերուն վերայ, զիջանի, քաղցրանայ, գթայ սխալական աղամորդուն ու ների նորա վատ գործերն, որ արել է այս աշխարհիս վերայ:

Ամեն մահկանացու մարդոց սրտում հնչումէ մի սուրբ ձայն, ու այդ ձայնը հասնումէ, ընկնումէ ամենի ականջին, ինչ հաւատքից ուղումէ, լինի՝ մինչև անգամ՝ կռապաշտ, որ չէ արժանացել դեռ ևս յայանութեան լուսին, Քրիստոսի փրկարար վարդապետութեան աշակերտ լինելու: Այդ սուրբ ձայնն հնչումէ ու հնչում. ոչ շողոքորթութիւնը, ոչ դժկամակութիւնը կամ բարկութիւնը և ոչ խելք ծախելն կարող է այդ ձայնը կտրել:

Ի զուր է հաւատք ծաղրողն իւր անխոհեմ՝ թեթեամտութիւնովն դէս ու դէն ման գալիս ու ամեն բան դիպուածի գործ քարոզում, բարեպաշտ հաւատքը՝ հասարակ ու անհասկացող ժողովարդի խելքի բան, քրիստոնէութիւնն՝ կրօնականների հնարած մի ուսումն՝ բիրդ ժողովուրդին սանձելու համար. ի զուր չէ ուղում հաւատալ, որ առաքինութիւն կայ, այլ առաքինութիւնը համարումէ խելացնորութիւն կամ կեղծաւորութիւն. ի զուր է ուղում ինքն իրան համոզել թէ՛ ամեն բան լաւ է, ինչ որ մարդուս հնարագիտութիւնը, խորամանկութիւնն ու անձնական շահն ասումեն թէ՛ որս. ի զուր կցանկար նա ուրանալ աշխարհս ու ամէն բան ստեղծող Աստուծուն ու ամեն մի մարդու իւր գործին համեմատ հատուցանող երկնաւոր Դատաւորին. — ներքին ձայնն, որ մեր սրտի մէջ կայ, բարձր ձայնով ասումէ թէ՛ սուտ ես ասում, ո՞վ մարդ:

Երկիրը շարժումէ, տաճարներ ու պալատներ են փուլ գալիս, բնկնում. մտերիմ, սիրելի բարեկամներ մահուան գունով դեղնած, դազալ մտնում. սարսափելի կերպով կատաղած տարերքից որոտումն աշխարհք է բռնում ու կայծակներ է որ՝ մին մինի ետեւից խփումէ երկրիս վերայ այս ու այն տեղ: Մաղբողը զարհուրումէ. կայ Աստուած, ասումէ իւր ներքին ձայնն. Այո՛ կայ Աստուած, ասումէ ինքն ևս, լեզուն կապկապուելով ու սիրտը դալ բնկած:

Ի դուր ծաղրումէ չարագործն երկար ժամանակ իւր սրտի սուրբ ձայնն ու իւր կրթութեան հետեւանք համարում, իւր մանկութեան օրերում լսած առասպելների արձագանք անուանում: Ուղումէ իրան բարձր ու ազատ ցոյց տալ այս ամեն բանից, ինչ որ իրան թփումէ թէ՛ նախապաշարմունք է, և ծածուկ շարունակումէ այն յանցանքներն, որ գործումէր: Արհամարհանքով իւր չորս կողմն է մտիկ տալիս ու հարցնում. ո՞վ է այն հզօրն, որ ինձ պատժի: Իւր ներքին ձայնն ասումէ իրան. «—դէհա, մի աշխարհի գլխից, յիշէր + մեղեքեք քեզ, բայց լսե՛ք ինչ կայսրանի, ինչ կայսրանի լսե՛ք:— Զուր է ինքն իրան տալիս աշխարհային ծայրայեղ զուարճութիւնների. միշտ ծխումէ նորա սրտում խանձողն, որ պիտի կայսի ու վառուի. դա մի դժոխային կայծ է, որ իրան այրում, մրկումէ: Զուր է ուղում նա աշխարհիս սուրբ կարգից կտրուել, դուրս գալ այն կարգից, այն օրէնքից, որով մարդս այն պիտի հնձի ինչ որ ցանել է. մի անյայտ զօրութիւն քաշում, տանումէ նորան իւր հետն ու կապումէ իւր գործերի հետն աշխարհիս այս յաւիտենական և անփոփոխ օրէնքի ու կարգի հետ: Իւր կորուստն է տեսնում նա իւր ծածուկ մեղքերից, դէմ՝ դնել չէ կարողանում. միշտ ինքն իրանից փախչումէ. անհանգստութիւնը խաւարեցնում, փչացնումէ իւր կեանքը. ներքին ձայն ասումէ իրան. Աստուած մեղսե՛ք է:

Ի դուր, զրպարտող նախանձ, հալածումես դու ճշմարտութիւնն և ուղումես արժանաւոր մարդու՝ իւր արժանաւոր գործերով ստացած թաղը գլխիցը բռնի հանել: Ի դուր ես արքորում դու, անխիղճ բռնակալ, անմեղին, որ քո չարագործութիւնները ծածկես. ի դուր ես նորան թակարդներ լարում, որոգայթ ձգում սուտ վիճակներով, կաշառած դատաւորներով, քեզ ամբթ ու նախառնք բերող բանտերով, ամեն տեսակ տանջանքներով. չես

կարող նորան կոտրել ու քո կամքիդ բերել: Նա համարձակ կծի-
ծաղի կեղծաւոր երեսիդ, իւր քաշած ցաւերից արտասուք թա-
փած ժամանակն անգամ քեզ ամաչեցնելով, կոտոր քցելովը կը-
յաղթի, մինչդեռ դու քո գահիդ վերայ նստած ժամանակդ
կտեանես, որ դողուժես գլխիդ մինչև ոտքդ, նա իւր բանտի մէջ
նստած է ուրախ սրտով, մինչդեռ դու մեծահասց սեղան նստած,
վայելչութիւն ես քաշում, բայց անհանգիստ բոլորովին ու սաստիկ
երկիւղ քաշելով, ուզես, քաշաքաշ տար նորան մահապարտներին
սպանելու տեղը, նորա մահն՝ իւր յաղթութիւնը կլինի, իսկ նորա
յաղթութիւնը՝ քո դատապարտութիւնը:

Այս է Խղճահաւի զբոսն, որ մի աներեւոյթ հրեշտակի նման
մահկանացու մարդոց ժողովի մէջ մտնումէ ու չէ թողնում, որ
ստորանայ ճշմարտութիւնն, արդարութիւնն ու անմեղութիւնը,
որ յարագործին բռնումէ, ինչ մութ ու ծածուկ տեղ էլ որ փախ-
չի, ու յանցաւորին գետինը փռում, թէ՛ն մի ամբողջ ժողովուրդ
նորան աստուածացրած լինի:

Աստուծոյ յաւիտեական օրէնքը գրած է ամենայն մարդոց սրտ-
քը, սորա համար մեր ներքին ձայնը միշտ կայ ու լսվումէ ու երբէք
չէ կարելում, և մեր մտքերն իրար հետ կռուելով, իրար հակա-
ռակելով մեր ամէն մի գործի համար մեզ կամ դատապարտումեն,
կամ արդարացնում:

Խղճմտանքը սորվեցնումէ մինչև անգամ անգէտին՝ թէ ինչ
պէտք է անի: Ոչ որ չէ կարող իրան արդարացնել, իւր յանցանք-
ները՝ թէ աշխարհի, թէ իւր խղճի և թէ մանաւանդ ամենագէտ
Աստուծոյ առաջը նորանով թէ՛ չգիտէր, ինչն է ուղիղը և ինչ
է ծուռը, ինչն էր իրաւացի և ինչն էր անիրաւ բան:

Խղճմտանքը չէ կաշառվում, նա արդար դատաստան անող է:
Եթէ որ բարին անելու այս սուրբ զգացմանը հետեւես, ոչ մի ժա-
մանակ դիտմամբ չես դուրս գալ ուղիղ ճանապարհից ու չես
ոխալուիլ, երբէք գիտութեամբ վատ բան չես անիլ, ու ինքդ քեզ
հետ հաշտ և ինքդ քեզանից գոհ կապրես, լսիր այս վարժապետի
ասածին, սորա խօսքից դուրս մի գալ, որքան էլ որ քո զգայական
հակումներդ գոռան, գոչեն թէ՛ դորա ասածը չենք ընդունում:
Լսիր դորան այն կասկածելի դիպուածներումն, երբ որ դու մի-
մեանց հակառակ հակումներից պիտի քո ճանապարհդ կորցնես,
մոլորուես այն տեղ, ուր քո շահդ պիտի լինի ուրիշների վնասովը:

ուրիշների դէմ արած անարդարութիւնովդ: Դու մտածումես վրէժ առնել մի մարդուց, որին բարի չես կամենում. բայց քո խղճմտանքդ ասումէ քեզ, նորանից ազնիւ եղիր և ամաչեցուր քո հակառակորդիդ քո մեծահոգութիւնովդ:

Անվայել ցանկութիւնները վրդովումեն քո զգացմունքներդ. մարմնոյ հեշտութիւնը քեզ հրապուրումէ մի ծանր յանցանք գործելու, բայց քո խղճմտանքդ ասումէ քեզ բարձր ձայնով. անպատկան, մի՞թէ ուղումես թոյնն անմեղի սիրտը թափել: Մի՞թէ ուղումես յանդգնել գլուխ բարձրացնել Աստուծոյ դէմ ու մի դրախտ քանդել, ոչնչացնել: Աչքդ դրել ես ուրիշի ունեցածի վերայ, որ խաբէութեամբ կարող էիր ձեռքդ ձգել, բայց քո խղճմտանքդ ասումէ քեզ պարզ, մտիկ, գլխիցդ հանիր այդ միտքդ. կորչի, գնայ այդպիսի շահն, որ պէտք է ունենաս, քեզ քո խիստ առաջդ ընդ միշտ անարժան մարդ պիտի համարի:

Խղճմտանքը մեզ բան է սորվեցնում, և սորվեցնում է լուրջ կերպով այն բանն, ինչ որ արդարն և ուղիղն է. եթէ որ նորա քեզ տուն տուածովը չգնաս, քեզ համար ուրիշ ճանապարհ չկայ բաղտաւորութեան հասնելու: Ոչ դքի մի լսիր. մի մտածիր թէ՛ մի՞թէ ուրիշ ճանապարհ չկայ, մի՞թէ մի ուրիշ հնարք չեմ կարող գտնել, որ իմ՝ թէև անվայել՝ ցանկութիւններիս հասնեմ. ծնւեալ ես մտածում. քեզ հրապուրումէ մի չար գործ և այդ գործիդ ետեւից ծածուկ քո ճանապարհդ է մտիկ տալի զղջումն իւր կտրիճի խայթոցներովն. խղճմտանքդ ոչ մի կերպով քեզ հետ չի համաձայնիլ, քո ասածիդ, ուղածիդ կամք չի տալ: Դու ուղումես նորա հետ սակարկութիւն անել, զո՛ւր է. խեղճ հոգեղէն տկար մարդ, սխալվումես. այդ դատաւորին չես կարող կաշառել:

Խղճմտանքը սորվեցնումէ Աստուածային զօրութիւնով. նա ասումէ. այս բանն արա՛, այն՝ մի անիլ, որովհետև ուղիղ՝ կամ ծուռ է. բայց այդ ասումէ ոչ թէ նորա՛ համար, որ դու շահ՝ կամ անարգանք պիտի ստանաս: Դու պէտք է բարին անես նաև այն ժամանակն, որ մի օգուտ չունիս ամենեւին, մինչև անգամ այն տեղն էլ, որ վնաս պիտի գայ քեզ քո արած գործիցդ: Այսպէս է ասում Յիսուս Քրիստոս. « Ի՞նչ օգուտ հարցո՞ւմ եմք որ Բուրբաշահին էլ յեւթեբէրի — էւր հոգո՞ւն զեւս հասցրած լինի »:

Խղճմտանքն զգուշացնումէ: Արդէն երեխայ ժամանակներս մեր՝ այս՝ այն խաղը արած միջոցին՝ կամ մեր՝ այս՝ այն տան բանն

արած ժամանակը՝ վախ էր ընկնում մեր սիրտն, երբ որ միաքնն-
րիցս անց էր կենում՝ թուլանալով, խաբուելով, ուրիշներից օրի-
նակ առնել, նոցա արած չգովելու գործին հետևել, կամ թէ
ինքներս մի վատ հակումից դրդվումէինք մի վատ բան անելու:

Գողը՝ գեռ իւր ձեռքը չտարած ուրիշի սեփականութիւնը վեր
առնելու, սուտ երգումն ուտողը՝ գեռ իւր չարագործ մատը չը-
բարձրացրած, անհաւատարիմ մարդը՝ իւր բարեկամին գնալ
մատնելուց գեռ առաջ՝ ինչպէս անհանգիստ են լինում, ինչպէս
սիրտները խփումէ: Նրկիւզն, որ ընկնումէ իրանց սիրտներն, ինչ
սարսափելի ու ծանր կերպով հասկացնումէ ու ստիպում, որ ի-
րանց մտքումը դրած չար գործիցը յետ կենան. և որչափ աւելի
սաստկանումէ այդ անհանգստութիւնը, քանի որ մեղք գործողն
աւելի է մօտենում իւր նպատակին:

Մարդուս կռուելն իրան զգուշացնող իւր խղճմտանքի հետն՝
իւր բարի հրեշտակին հետ գօտեմարտելուն է նման, որ իրան
պինդ բռնելն և ոչ թէ վայր ընկնել թողնելն է ուղում: Ա՛խ,
ինչպէս շատ անգամ այս հրեշտակի գէս ի բարին աղդու կերպով
մեզ յորդորող սրտաշարժ խօսքը դուր է անց կենում: Չար գոր-
ծըն, որ մտքումը դրել էր, կատարումէ մարդս: Մեղք գործողն
այս տեղ ու այն տեղ կորցնումէ պատիւն մարդոց առաջն, և
միշտ աւելի տխուր և աւելի կամաց գալիս է այն աստուածային
պատգամաւորի զգուշացնող ձայնն, որ իրանից հեռանումէ:

Մահկանացու մարդս մի անգամ որ մեղքի ծառայ դարձաւ՝ ու
սիրտն, որ քանի գնաց, աւելի ու աւելի քարացաւ, խղճմտանքը
մի մի անգամ, կարծես, իւր՝ մի ժամանակ ունեցած՝ իշխանու-
թիւնը բոլորովին կորցնումէ. պատահումէ, տարիներ են անց կե-
նում, բայց նա չէ շարժում, կարծես մեռել է. մինչև անգամ
այնպիսի օրինակներ կան պատմութեան մէջ, որ ցոյց են տալի
մեզ մարդուս խղճմտանքի բոլորովին մեռնելն ու էլ չըղարթնելը,
իւր բոլոր կեանքի մէջ և մինչև իւր մահն: Այսպէս պատմվումէ
գուքս Ալբայի վերայ, որ Նիդերլանդում բողոքականներին հալա-
ծելու ժամանակը՝ 18,000 մարդուց աւելի՝ իբրև հերետիկոս՝ սպա-
նել է տուել, թէ իւր անկողինքումը հեշտ ու հանգիստ է հոգին
տուել: Արդեօք մոլեւանդութիւնն այն աստիճան կուրացրել էր
նորան, որ իւր սարսափելի եղեռնագործութիւնն աստուածահա-
նոյ բան էր համարում. ու յիշաւի հաւատումէր, որ երկնքի ար-

քայութեան մէջ տեղումը կլինի: Կամ թէ այնքան մեծ վարպետ էր ներսից ջուկ մարդ լինելու՝ իսկ դրսից ջուկ մարդ երեւելու կողմանէ: որ ներսից քաշած տանջանքները մինչեւ իւր կեանքի վերջին վայրկեանը աշխարհի աչքից ծածկել, թագցնել կարող էր: Այո՛, կան մարդու կերպարանք ունեցող այնպիսի հրէշներ, որ Աստուծոյ բնութեան մէջ դրած օրէնքը կարողանում են այն աստիճանի ուրանալ, որ իրանց համար, կարծես, ոչ մի բան չըկայ, ուրեմն ինչ կուզեն, կանեն: Այդ ամենագէտ Աստուծոյն միայն յայտնի է և Աստուած է միայն դորա ամենարդար Գաւառիւրը: Մեք մահկանացու մարդիկս իրաւունք չունինք Նախախնամութեան ճանապարհները քննելու: Այնքան միայն մեզ համար բաւական համարենք իմանալու, որ այդպիսի օրինակները միայն շատ հազուադէպ բացառութիւններ են ընդհանրապէս ընդունուած կարգ ու կանոնից: Սորա հակառակ իրողութիւնները թէ պատմութեան մէջ և թէ մեր կեանքի մէջ պատահած փորձերով՝ անդադար կրկնվում են և նորից ու նորից հաստատվում: Ամեն մի արած անիրաւ ու վատ գործը մեր սրտի խորքումն իւր արձագանքն ունի: Այս արձագանքը կարող ենք գուցէ առ ժամանակ մի այլ և այլ ու անընդհատ վայելչութիւնների, զուարճութիւնների ու դրադմունքների մէջ բռնի խեղդել ու չլսել. մեք կարող ենք մի ծածուկ երկիւղի, սրտի մի անհանգստութեան զգացումը, որ մեր մէջ զարթնում է իւր մեղադրանքներովը մեր դէմ, բանի տեղ չգնել. բայց միշտ չենք կարող այդ անել: Ամեն մի միայնակ անցկացրած ժամը, ամեն մի անբուն անց կացրած գիշերն ընդդէմ մեր կամքին միտքներս է ձգում մեր արած վատ գործն ու մեզ տանջում: Ամեն մի սիրտ շարժող պատահումը մեր կեանքի մէջ, շատ անգամ միայն մի աննշան դիպում, որ անգամ ուրիշ մարդու աչքին չէր ընկնիլ, նորից զարթեցնում է վրէժխնդիր ոգիներին: Որչափ երկար ժամանակ կարողացել ենք ամենայն կերպով աշխատել, որ մեր արած վատ գործը մտքներս չբերենք ու մեր սրտի հանգստութիւնը չխանգարուի, այնչափ աւելի սարսափելի կերպով յարձակվում է դէպ ի մեզ մեր մեղքի դառն յիշատակը՝ մի հեղեղի նման, որոյ ընթացքի առաջ մի թումբով կտրել, փակել ուղեմար մարդ, ու այդ ջուրը, քանի գնար, բարձրանար, ուռչէր, որպէս զի, երբ որ ժամանակը գայ, հասնի, յանկարծ մի թունդ քամիով ամեն բան հեղեղի, ծածկի, տանի, փչացնի:

Խղճմտանքը պատժուեալ է: Կարողանայինք մի անբաղդ մարդու իւր միայնակ եղած ժամանակը տեսնել, երբ որ նստած՝ տանջւում է իւր խղճմտանքից. ինչպէս նա Աստուծոյ երեսից ընկած, մարդոց աչքից ընկած, ինքն իրան ատում է ու արհամարհում. ինչպէս՝ մի արդար մարդ տեսած ժամանակն՝ զգում է իւր չարագործ, գարշելի մարդ լինելն. ինչպէս մինչև անգամ միամտութեամբ ասուած մի խօսքը դաշոյնի հարուած է դառնում նորա սրտին. յիրաւի, շատ լաւ կլինէր այն խոր տպաւորութիւնը մեր մոլորման էլ անմոռանալի ու անջնջելի մնար ու մեզ համար մի զգուշացնող հրեշտակ լինէր մեր կենաց փորձութիւնների մէջն:

Անդադար դողում է իւր մեղքը ճանաչող մարդու սիրտն այն բուսկից, որ իւր գաղտնիքը կարող է լոյս աշխարհի առաջը հանուել: Բայց երկիւղի և խղճմտանքի խայթոցի մշտական տանջանքները վերջապէս այնքան զօրանում են և աւելանում, որ, այս ու այն մարդն, իւր սրտի մէջ եղած դժոխային երկիւղից ազատուելու համար, ինքը վազում, գնում է ու իւր յանցանքը խոստովանում: Ինչպէս որ մարդ կայ, որ մարդ է սպանել՝ ու էլ չէ կարողանում հանգստութիւն գտնել, մինչև որ չգտայ ու իւր յանցանքը դատաւորին չյայտնի: Ինչպէս այս ու այն խարեբայ մարդը, պառկած իւր մահուան անկողինքում, չէ կարողանում հոգին տալ, մինչև որ իւր մօտը չի կանչում իւր խաբած մարդուն, կամ նորա զաւակներին, ու իւր մեղքը չէ խոստովանում ու թողութիւն ստանում ու ապա հանգստանում: Այնպիսի մարդ կայ, որին կատաղութիւնը խելագարութեան աստիճանին է տարել, հասցրել: Կային, առաջին եղբայրասպանն, կատաղութիւնից թափառում էր երկար ժամանակ՝ և ոչ մի տեղ հանգստութիւն չէր գտնում. Յուդա Իսկարիօտացին, Քրիստոսի մատնիչը, իրան տանջող կատաղութիւնից ազատուելու համար, ինքն իրան սպանեց: Դեռ այժմ էլ կան այնպիսի կարեկցելի ու խղճալի մարդիկ, որ Կայենից ու Յուդայից շատ հեռու չեն՝ ու գժանոցներումն, իրանց նմանների կարգումն, են և կան, ա՛խ, այնպիսիներն, որ իրանց ձեռքով իրանց սպանում են, որ սրտի անտանելի տանջանքից գերեզմանում հանգստութիւն գտնեն: Այս է խղճմտանքի սարսափելի զօրութիւնը:

Բայց մարդը խղճմտանքն էլ նոյնպէս աստուածային մի վարձաւորութեան է մեզ արժանացնում, ինչպէս որ արհամարհուած,

անարգութեամբ անարգութիւնն՝ սարսափելի կերպով վրէժխնդիր է լինում։ Այլ որ մաքուր, հանգիստ խղճմտանք ունի, նա ամէն իրան պատահած մարդոց մէջ իւր բարեկամներն, իւր սրտին մօտիկ մարդիկն է միայն տեսնում։ Նա ոչ դիպ հեռու չէ փախչում, նա ուրիշից ծածկելու, թագցնելու բան չունի, որ քաշուի։ Նորա սիրտը միշտ հանգիստ է, միշտ ուրախ։ Այն ուրախութիւնն, որ բերումէ նորան փոխուող ժամը, նա լիովին վայելումէ, և այն անբաղդութիւնը որ յանկարծ նորան պատահումէ, նա տղամարդի սրտով է տանում։ Նա այս զգացմունքովն է մխիթարւում ու զօրանում, որ խօսքով էլ ասումէ ինքն իրան. այն նեղութիւններն, որ դու քաշումես, քեզանից, քո մեղքից չէ։ Աստուած հետք է, քաշածներիցդ սիրադ թող չկտորի ամենեւին։ Մտիկ տուէք հալածութեամբ անմեղին. իւր մաքուր խղճի ուրախութիւնով թողնումէ, երբ որ բանն այնպէս է եկել, իւր հայրենիքի բաղդաւութիւնն և ընտրումէ իւր համար մութացկան աղքատի ցուպը, աստուածային մի հանգիստ սրտով ասումէ նա իւր հալածողներին, ինչպէս Յիսուս մի ժամանակ Գեթսեմանիումն առաջ իրան բռնելու եկողներին. « ում որ պտուում էք, այն ես եմ »։ Աշխարհիս անարգանքն, որ նա կրումէ, աշխարհումն անմեղաբար նորա կրած խայտառակութիւնն իրան անպատուութիւն բերել, կամ պատուից ձգել չէ կարող. ամէն անբաղդութիւն, որոյ մէջն ընկնումէ՝ կամ ընկել է, ամէն փորձանք, որ նորա գլխին գալու լինի, կամ արգէն եկել է, չէ կարող խելով զրկել նորան այն երկնաւոր խաղաղութիւնից և անդորրութիւնից, որ նորա սրտի մէջ ընկնումէ։ Մաքուր և արդար խղճմտանքը մի երկինք է մարդու սրտի մէջ, իշխանութիւն է տալի նորան չարերի վերայ, նեղութեան մէջ մի պաշտպան աստուած է, մրրկի ժամանակը խարխուլ է նորա համար և ամենափափուկ բարձ, որոյ վերայ հանգիստ կարող է նա հոգի տալ։

Այլ սուրբ Աստուած, երանի թէ մաքուր խղճմտանքի այս անձառելի ուրախութիւնն իմ սեպհականութիւնս լինէր միշտ։ Արեւ ոչ մի ժամանակ ոչ Քո և ոչ իմ առաջին ամօթու կարմրէի իմ արածներիս պատճառով։ Ար իմ սիրտս երբէք չզգար ոչ անմաքուր խղճմտանքի արհաւիրքն և ոչ զղջման օձի խայթոցը։

Յիրաւի՝ ես անգոր ու տկար արարած եմ ու իմ նուաստութիւնս զգումեմ ու ճանաչում։ Կարելի է, որ իմ թեթեամտու-

Թիւնովս շատ սխալ քայլ անեմ, կարելի է, որ յուզուած կրքիցս տարուելով, քո սուրբ կամքդ մտքիցս քցեմ: Ախ, այն, այն ժամանակն, ո՛վ իմ խղճմտանք, լինիս իմ առաքինութեանս, անմեղութեանս ու սրտիս հանգստութեան պահապանն: Ինձ առաջնորդ լինի ճշմարիտ և ազնիւ բանի աստուածային զգացմունքն, որ ինքս ինձ անարժան չլինիմ ու Աստուածանից չհեռանամ, չօտարանամ. և ոչ Քեղանից, ո՛վ իմ Փրկիչ, իմ երկնաւոր ուսուցիչս: Արոյ խօսքովն ես սրբութեան պիտի կարողանամ հասնել:

Չէ, չէ, ո՛վ իմ Աստուած, զուր տեղ չես դրել իմ սրտումս իմ մտքերիս, խօսքերիս ու գործերիս դատաւորը: Խղճմտանքի ձայնը Քո ձայնդ է. մի՛ թէ ես արհամարհել կարո՞ղ եմ երբէք: Չէ, եթէ շատ դժուար ևս լինէր ինձ համար յաղթել իմ չար ցանկութեանցս, ո՛վ Աստուած, լսի՛ր իմ հրապարակաւ արած ուխտս. ես պիտի մաքուր ու յանդիմանութիւնից ազատ կեանք ունենամ: Աւելի ուրախութեամբ կտանեմ բոլոր աշխարհի ինձ արած ծաղրը, աւելի ուրախութեամբ կտանեմ աղքատութիւն, քաղց, թշուառութիւն, պատրաստ եմ մինչև անգամ մեռնել, քան թէ հենց մի մեղքի տէր լինիմ, որ ինձ պատուից պիտի ձգի հենց իմ առաջս: Միայն կարողանամ պարզերես ու համարձակ աչքերս երկինքը քցել գէպի Քեզ, ի՞նչ են որ ինձ համար այնուհետև աշխարհիս ժամանակաւոր նեղութիւնները: Միայն իմանամ, որ Քեզ հաճոյ եմ, արգէն երջանկութեան հասած ինձ կհամարեմ: Դո՛ւ զօրացուր ինձ և առաջնորդիր Քո սուրբ Հոգւոյդ զօրութիւնովն իմ կենացս ճանապարհների մէջ: Դո՛ւ վերկիր ինձ ամենայն չարից:

(Թ. Խ. Գ.)

Գ. Ե. Ա.